ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**10.10.2023 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 գնման պայմանագրի**

ք. Երևան «25» 12 2023թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ԱՍՖԱԼՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ.Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.10.2023 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի** կողմից ներկայացված 18.12.2023 թվականի N Ն/69055-23 գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

***1. Պայմանագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Չարենց-Սարալանջ/ աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 26952000 (քսանվեց միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Պայմանագրի 6-րդ չափաբաժնի մասով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Սարյան 24/1 (Ամիրյանի դեպի Լեո) աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 49098000 (քառասունինը միլիոն իննսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.3 Պայմանագրի 7-րդ չափաբաժնի մասով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Սայաթ-Նովա (Կոնսերվատորիա)/ աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 49236000 (քառասունինը միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

***2. Այլ պայմաններ***

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ՀՀ Երևան Արցախի փ., շ.10դ, բն.42 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկը՝ Արարատբանկ ԲԲԸ |
| ՀՀ 900012000775 | ՀՀ 1510053373410100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00491736 |
| | Տնօրենի ժ/պ |
| Վ.Պապիկյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Կ.Գևորգյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
10.10.2023 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 գնման պայմանագրի
«25» 12 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքների | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 45231177/549 | մայթերի հիմնանորոգման աշխատանքներ / Չարենց-Սարալանջ | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 26952000 | 26952000 |
| 6 | 45231177/553 | մայթերի հիմնանորոգման աշխատանքներ /Սարյան 24/1 (Ամիրյանի դեպի Լեո) | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 49098000 | 49098000 |
| 7 | 45231177/554 | մայթերի հիմնանորոգման աշխատանքներ /Սայաթ-Նովա (Կոնսերվատորիա) | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 49236000 | 49236000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012000775
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ
ՀՀ Երևան Արցախի փ., շ.10դ, բն.42
Բանկը՝ Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510053373410100
ՀՎՀՀ 00491736
Տնօրենի ժ/պ

Հ. Նազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«21» 12 2023

№ COD/2144

**Հավելված 5**
**«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258»* ծածկագրով**
**գնանշման հարցումի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N COD/2144**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 10.10.2023թ.-ին կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 «ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ» /***Չափաբաժին 2*** *Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի փարածքում մայթերի հիմնանորոգման /Չարենց-Սարալանջ/ աշխատանքներ/* /***Չափաբաժին 6*** *«Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի փարածքում մայթերի հիմնանորոգման /Սարյան 24/1 (Ամիրյանի դեպի Լեո) աշխատանքներ/* /***Չափաբաժին 7*** *Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի փարածքում մայթերի հիմնանորոգման /Սայաթ-Նովա (Կոնսերվատորիա)/ աշխատանքներ/* (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 14,135,000.00 (Տասնչորս միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում 21.12.2023թ.-ից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ սակայն ոչ ուշ քան 15.07.2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ.՝

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ 00000291 ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1
Վարկային գործառնությունների համար
Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan
ստորագրություն
signature
For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC 00000291

Պատասխանատու՝ Ն.Ղալումյան/ 010 511 211 (2225)

ConverseBank

«21» 12 2023

№ COD/2143

Հավելված 4
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258»* ծածկագրով
գնանշման հարցումի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N COD/2143**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 10.10.2023թ.-ին կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 «ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» /*Չափաբաժին 2 Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Չարենց-Սարալանջ/ աշխատանքներ/* /*Չափաբաժին 6 «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Սարյան 24/1 (Ամիրյանի դեպի Լեո) աշխատանքներ/* /*Չափաբաժին 7 Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում մայթերի հիմնանորոգման /Սայաթ-Նովա (Կոնսերվատորիա)/ աշխատանքներ/* (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 21,202,000.00 (քսանմեկ միլիոն երկու հարյուր երկու հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 21.12.2023թ.-ից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 15.07.2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/258-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավաստ. անձ.

Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan

Պատասխանատու՝ Ն.Ղալումյան/ 010 511 211 (2225)



39670